ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա խնդիրը

«Բուսասանիտարիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ 1) մշակվել է՝ հաշվի առնելով ներկայումս բուսասանիտարիայի ոլորտում առաջացած խնդիրներին արագ հանգուցալուծում և իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը:

Սույն նախագծի ընդունմամբ կկարգավորվեն «Բուսասանիտարիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) որոշ դրույթներում առաջացած բացերը, տարընկալումները, մասնավորապես կհստակեցվեն Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արտադրված և փորձարկված պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար անհրաժեշտ արտադրող ֆիրմայի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջը:

Իրավական կարգավորում կտրվի օտարերկրյա պետություններում արտադրված ու փորձարկված և գործածության մեջ գտնվող պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման ժամանակ հայտատուի կողմից գրանցման երկրի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջի հետ կապված խնդիրների լուծմանը, հստակեցնելով տվյալ ապրանքների պետական գրանցման գործընթացում Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով պահանջվող տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը: Սահմանվել են դրույթներ, որոնց համաձայն պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցումը կկատարվի ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով, որոնց դեպքում կտարանջատվի նշված պահանջվող տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը:

Բացի այդ, օրենքում ներկայումս սահմանված չեն դրույթներ՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման գործընթացում գրանցումը մերժելու համար բացասական եզրակացություն տալու իրավական հիմքերը, ինչի բացակայությունը նույնպես դրանց գրանցման գործընթացը պատշաճ կերպով իրականացնելու համար կարող էր առաջացնել խնդիրներ:

«Սննդամթերքի անվտանգության վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ 2) մշակվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաճախ պեստիցիդներ կամ ագրոքիմիկատներ արտադրող ընկերությունները, մասնավորապես եվրոպական, ամերիկյան, ճապոնական և այլ առաջավոր պետություններում արտադրված կամ գրանցված արտադրանքը ստուգվում և գրանցվում է հեղինակավոր և մասնագիտացված միջազգային ինստիտուտների կողմից, որոնց դեպքում Հայաստանի Հանրապետությունում ներպետական գործող բարդ

ընթացակարգերով պեստիցիդների կամ ագրոքիմիկատների «կրկնակի փորձաքննության» արդյունքով դրանց ներմուծումը նպատակահարմար և արդյունավետ վարչական գործիք չէ: Ուստի, նախագիծ 2-ով նախատեսվել են իրավական մեխանիզմներ, ըստ որոնց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ցանկում ներառված երկրներում արտադրված կամ գրանցված պեստիցիդներն ու ագրոքիմիկատները Հայաստանի Հանրապետություն ներմուծվեն առանց փորձաքննության:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ 3) մշակվել է՝ հաշվի առնելով առաջիկա տարիներին գլոբալ մակարդակով կանխատեսվող բույսերի պաշտպանության միջոցների շուկայական հարաբերությունների աճը և տվյալ ոլորտում կանոնակարգման ժամանակակից համակարգերի, մասնավորապես հետագծելիությանն ուղղված մեխանիզմներին առնչվող թերությունների չվերացման պարագայում պեստիցիդների և ագրոքիմիկատների բացասական ազդեցությունը մարդու կյանքի, առողջության և շրջակա միջավայրի վրա: Միաժամանակ այն լրացուցիչ հնարավորություններ կապահովի պեստիցիդների և ագրոքիմիկատների շրջանառության նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու, սպառողների իրավունքների պաշտպանության, սահմանված պահանջներին համապատասխան պեստիցիդների և ագրոքիմիկատների շրջանառության համար, ինչպես նաև կնպաստի բուսասանիտարական իրավիճակի բարելավմանը և մարդկանց առողջության պահպանմանը:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունն առաջացել է Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար համապատասխան պետական տուրքի դրույքաչափեր սահմանելու համար՝ կատարելով անհրաժեշտ լրացումներ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի հուլիսի 12–ի ««Դեղերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 662–Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 21–րդ կետով սահմանված է «Անասնաբուժական պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների գովազդի թույլտվության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ: Ուստի «Պետական տուրքի մասին» օրենքի 20–րդ հոդվածում լրացում կատարելը բխում է Որոշման կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը

Նախագիծ 1-ի անհրաժեշտությունը բխում է օրենքով չնախատեսված որոշ դրույթների բացակայությամբ և առկա դրույթներում տարընկալումների հստակեցմամբ, ինչպես նաև մասնագիտական բնույթի շտկումներով:

Ներկայումս գործող կարգավորումները, մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արտադրված և փորձարկված պեստիցիդների և ագրոքիմիկատների համար պահանջվում է ներկայացնել պեստիցիդների կամ ագրոքիմիկատների արտադրող ֆիրմայի վերաբերյալ տեղեկատվություն, որն էլ տնտեսավարողների շրջանում տեղիք էր տալիս հակասական կարծիքների, թե արտադրող կազմակերպության ո՞ր հասցեն է իրականում համապատասխանում պահանջվող տեղեկատվությանը, իրավաբանական հասցե՞ն, թե՞ այն արտադրական տարածքի, որտեղ իրականացվել է արտադրանքի տեխնիկական արտադրությունը: Նման պարագայում պեստիցիդի կամ ագրոքիմիկատի ՀՀ-ում գրանցման փուլում խնդիրներ են առաջանում՝ գրանցման գործընթացը պատշաճ և առանց խոչընդոտների իրականացնելու հարցում: Այս համատեքստում սույն իրավական ակտով սահմանվել են «արտադրող» և «արտադրական տարածք» հասկացությունների մեկնաբանությունները, ինչպես նաև հստակեցվել են դրանց վերաբերյալ տեղեկատվության ներկայացման մանրամասները:

Միաժամանակ, Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված՝ գրանցող երկրի և համարի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջը՝ որոշ դեպքերում տնտեսավարողների շրջանում առաջացնում է խնդիրներ՝ կապված եվրոպական և ռուսական արտադրության մի շարք թունաքիմիկատները ՀՀ-ում գրանցելու հետ, և եթե դրանք ենթակա չեն եղել գրանցման արտադրող երկրում, հետևաբար, նման դեպքերում հնարավորություն չի լինում ապահովել տվյալ դրույթի կատարումը, գրանցման գործընթացի պատշաճ կազմակերպումը, քանի որ եվրոպական երկրներում արտադրված և փորձարկված ագրոքիմիկատները, ֆերոմոնային թակարդները, բույսերի աճի խթանիչները արտադրվում և շրջանառվում են եվրոպական միության կանոնակարգերին և դրանցով սահմանված ստանդարտներին համապատասխան, իսկ կենսապեստիցիդներին տրվում է ազատ շրջանառության սերտիֆիկատ: Նշված նյութերի պետական գրանցումն ըստ անհրաժեշտության իրականացնում է ներմուծող երկիրը՝ իր ազգային օրենսդրությանը համապատասխան: Պետք է փաստել, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ագրոքիմիկատների և ֆերոմոնային թակարդների մեծ մասը ներմուծվում է եվրոպական երկրներից և Ռուսաստանի Դաշնությունից, ուստի գրանցման հետ կապված վերոնշյալ պահանջի վերանայման անտեսումը խնդրահարույց կլինի հանրապետության գյուղատնտեսության ոլորտի համար: Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ իտալական ընկերությունների կողմից ՀՀ-ում իրականացվող և լայն տարածում գտած «ինտենսիվ այգեգործությունը» նույնպես կբախվի լուրջ խնդիրների, քանի որ վերահսկողությունը իրականացնող ընկերությունները երաշխավորում են բերքատվությունը միայն այն պարագայում, երբ այգիների մշակումը իրականացվում է ծրագրի շրջանակներում իրենց կողմից նշանակված պեստիցիդների և ագրոքիմիկատների կիրառմամբ, որոնց մեծ մասը կազմում է եվրոպական շուկայում վստահություն ձեռք բերած ընկերությունների արտադրանքը, ուստի դրանք չեն կարող փոխարինվել այլ արտադրանքով: Սույն նախագծով սահմանված գրանցման պարզեցված ընթացակարգով, Կառավարության սահմանած դեպքերի հիման վրա հնարավորություն կտրվի օտարերկրյա պետություններում արտադրված և փորձարկված որոշ պեստիցիդների և ագրոքիմիկատների համար բացառել գրանցող երկրի, համարի վերաբերյալ պահանջը:

Նախագծով պեստիցիդների և ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով գրանցման իրավակարգավորումների սահմանումը նաև հնարավորություն կտա եվրոպական, ամերիկյան և այլ առաջավոր պետություններում արտադրված և գրանցված պեստիցիդները կամ ագրոքիմիկատները Հայաստանի Հանրապետությունում գրանցել առանց «կրկնակի» փորձարկումների, քանի որ նշված երկրներում դրանք արտադրվում և գրանցվում են այնպիսի բարդ ընթացակարգերով, հեղինակավոր և մասնագիտացված միջազգային ինստիտուտների կողմից կատարված փորձարկումների արդյունքների հիման վրա, որոնց դեպքում հանրապետությունում ընդհանուր երկարատև ընթացակարգերով գրանցելը նպատակահարմար և արդյունավետ վարչական գործիք չէ:

Միաժամանակ, ագրոքիմիկատների գրանցման ժամկետը նպատակահարմար է երկարաձգել՝ սահմանելով 10 տարի նախկին 5 տարվա փոխարեն, հաշվի առնելով, որ օրենքում սահմանված են դրույթներ առ այն, որ ագրոքիմիկատի բաղադրության, առևտրային անվանման, արտադրող կազմակերպությունների հասցեների փոփոխության դեպքերում իրականացվում է վերագրանցում՝ համապատասխան տեղեկության ներկայացմամբ, և բացի այդ, Օրենքով սահմանված են գրանցումից հանելու դեպքերը, հատկապես՝ ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում: Հետևաբար, սահմանելով գրանցման ավելի երկար ժամանակահատված՝ նվազեցվում և պարզեցվում են դրանց գրանցման ուղղությամբ տարվող սահմանված ընթացակարգային աշխատանքները՝ չծանրաբեռնելով գործընթացին առնչվող լիազոր մարմնի աշխատանքային գործունեությունը:

Ներկայումս պեստիցիդների գրանցման գործող ընթացակարգերով գրեթե ամբողջությամբ հանձնաժողովի անդամների վրա է դրված տարվա ընթացքում ստացվող գրեթե հազարի հասնող հայտերի ու դրանց կից փաստաթղթերի փաթեթների ստուգելու պարտավորությունը և որոշումների կայացման հիմնական պատասխանատվությունը, իսկ գրանցող լիազոր մարմինն ապահովում է գործընթացի կազմակերպումը, փաստաթղթաշարժը, և հանձնաժողովի դրական կամ բացասական եզրակացությունների (ըստ էության՝ որոշումներ) հիման վրա գրանցում է արտադրանքը կամ մերժում արտադրանքի գրանցման հայտերը: Նման ընթացակարգով գրանցումը նպատակահարմար չէ, քանի որ գրանցման հանձնաժողովը ինստիտուցիոնալ (հիմնարկային) կառույց չէ, հանձնաժողովի անդամը պետական գերատեսչության կամ այլ կազմակերպության աշխատակից է, ով իր աշխատանքային պարտականություններին զուգահեռ սուղ ժամկետներում պետք է ապահովի մեծ ծավալի հայտերի և դրանց առնչվող փաստաթղթերի լիարժեք ստուգումը, ինչն առաջացնում է խնդիրներ՝ թե պեստիցիդների գրանցման գործընթացի, և թե իր աշխատավայրում իրականացվող գործառույթների հետ կապված: Հետևաբար, նախագծով սահմանվել են իրավակարգավորումներ, որոնք ապահովում են պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման գործընթացը լիազոր մարմնի կողմից, իր պատասխանատվությամբ՝ առանց հանձնաժողովի ներգրավման:

Չնայած այն հանգամանքին, որ բույսերի պաշտպանության միջոցների կիրառման և դրանց ազդեցության հարցերով կան զգալի ծավալով գիտելիքներ, այնուամենայնիվ այդ բնագավառում դեռևս

կան նշանակալի խնդիրներ: Դրանց լուծմանն ուղղված միջոցառումների շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել գլոբալ ուսումնասիրություններ և տարաբնույթ տվյալների հավաքագրում, ինչպես օրինակ.

- Տարբեր պայմաններում տարբեր գյուղատնտեսական մշակաբույսեր մշակելիս բույսերի պաշտպանության միջոցների կիրառման վիճակագրական տվյալներ,
- Շրջակա միջավայրի վրա բույսերի պաշտպանության միջոցների փաստացի ազդեցության որոշում՝ ընդհանուր ցուցանիշների օգտագործմամբ,
- Բույսերի պաշտպանության միջոցների կիրառման և դրանց ազդեցության հետ կապված ծախսերի ու եկամուտների գնահատական,
- Տարբեր պայմաններում մարդու կյանքի և առողջության վրա ռիսկերի գնահատում,
- Էկոհամակարգերի վրա պեստիցիդների կիրառման հետևանքները և այլն:

Վերոնշյալ խնդիրների լուծմանն ու կանխարգելմանը ուղղված պետական վերահսկողության քայլերից առաջնայինը՝ դա այն իրավաբանական ու ֆիզիկական անձանց հաշվառումն է, ովքեր զբաղվում են պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությամբ և/կամ վաճառքով: Պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և/կամ վաճառքը ծանուցման ենթակա գործունեության տեսակի սահմանումը թույլ կտա պետական գրանցման համարներով հաշվառել պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությամբ և/կամ վաճառքով զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ հիմք հանդիսանալով պետական վերահսկողական շղթայի բնականոն ընթացքի, ինչպես նաև բուսական ու կենդանական ծագման սննդամթերքի և շրջակա միջավայրի անվտանգության հետագծելիության գործընթացի համար:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Իրավական ակտերի նախագծերը մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

4. **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.4 կետի «Գյուղատնտեսության» բաժնից https://www.gov.am/files/docs/4586.pdf :

5. Նպատակը և ակնկալվող արդյունքը

Նախագիծ 1-ի ընդունմամբ բուսասանիտարիայի ոլորտում կսահմանվեն իրավակարգավորումներ, որոնք կբացառեն օրենսդրական դրույթների կիրարկման տարընկալումները, մասնավորապես հնարավորություն տալով պեստիցիդներ և ագրոքիմիկատներ ներկրող տնտեսավարողներին ճշգրիտ կողմնորոշվելու պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման գործընթացում պահանջվող փաստաթղթերի ներկայացման հարցում, ինչն էլ հնարավորություն կտա առանց արհեստական խոչընդոտների ապահովել պեստիցիդների և ագրոքիմիկատների սահմանված կարգով գրանցումը և դրանց հետագա ներմուծումը: Մասնավորապես, կհստակեցվի պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման գործընթացում արտադրողի տվյալների ներկայացումը, ինչպես նաև որոշ պեստիցիդների և ագրոքիմիկատների այլ երկրներում գրանցված լինելու և գրանցման համարի մասին անհրաժեշտ

տեղեկատվություն ներկայացնելու պահանջը: Նախագծով սահմանված պարզեցված ընթացակարգերը հնարավորություն կտան Եվրամիության և այլ զարգացած պետություններում գրանցված պեստիցիդների և ագրոքիմիկատների առանց կրկնակի փորձարկումներ կատարելու պարզ վարչարարությամբ գրանցումը, ինչն էլ հնարավորություն կտա գյուղացիական տնտեսություններում պեստիցիդների և ագրոքիմիկատների պահանջարկի ժամանակին ապահովումը, նվազեցնել գրանցման գործընթացին առնչվող պետական մարմինների ծանրաբեռնվածությունը, գրանցող լիազոր ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեության խթանումը՝ զարգացնելով տնտեսավարող սուբյեկների ձեռնարկատիրական գործունեությունը:

Նախագիծ 2-ով «Սննդամթերքի անվտանգության վերահսկողության մասին» օրենքում կատարվող փոփոխության արդյունքում հնարավորություն կտրվի պարզեցնել զարգացած պետություններում արտադրված կամ գրանցված պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծումը, խուսափելով կրկնակի փորձաքննության ընթացակարգից՝ ապահովելով գյուղացիական տնտեսություններին պեստիցիդների և ագրոքիմիկատների ժամանակին մատակարարումը և կայուն բուսասանիտարական իրավիճակի ստեղծումը:

Նախագիծ 3-ով «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Օրենքում կատարվող լրացման արդյունքում՝ պեստիցիդների և ագրոքիմկատների արտադրությունը և /կամ վաճառքը, որպես ծանուցման ենթակա գործունեության տեսակ սահմանելով՝ հնարավոր կլինի ապահովել տվյալ արտադրատեսակների օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ արտադրությունն ու վաճառքը: Այն հնարավորություն կտա նաև հնարավորինս կառավարել տվյալ բնագավառում ստվերային տնտեսությունը, իսկ պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավման ուղղությամբ տարվող քայլերը պետք է միաժամանակ ուղղված լինեն տնտեսական գործունեության թափանցիկության ապահովմանը, ինչն էլ հնարավոր է տվյալ իրավակարգավորումը սահմանելու պարագայում: